ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
МЕРДЗАВАНСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

05.08.2011թ.
թիվ 158

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. Ս.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ի կատարումն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի առաջին մասի, Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավարի 2011թվականի հուլիս ամսվա ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր 7/յոթ/ թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

7705-11
08 08 2011 г.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

01 հուլիսի 2011թվականի թիվ 19

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ 32,7ՄՔ ՏԱՐԱԾՔԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 17-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի սեփականությունը հանդիսացող շենքերի, հողամասերի վարձակալության իրավունքով տրամադրելու նպատակով մրցութային հանձնաժողովի 2011թվականի հուլիսի 01-ի թիվ 04 նիստի որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքում 2011թվականի հուլիսի 01-ին կայացած՝ համայնքի սեփականությունը հանդիսացող Երևանյան խճուղու 1-ին փակուղու թիվ 3 հասցեում գտնվող վարչական շենքից 32,7քմ տարածքը վարձակալության տրամադրման արդյունքները:

2.Մրցույթում հաղթող ճանաչված Պայքար Լևոնի Գրիգորյանի հետ կնքել վարձակալության պայմանագիր:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2011թվական հուլիսի 01

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

28 հուլիսի 2011թվականի թիվ 20-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԶԻՆԱՎԱՆԻՆ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 24 -րդ հոդվածով ,75-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով , 2-րդ մասով և 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թվականի դեկտեմբերի 24-ի N1922-Ն որոշումն և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունից ստացված 2011թվականի հուլիսի 22-ի ՊՆ 035/1218 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող, պետության սեփականությանը պատկանող ,հատուկ նշանակության հողերից Մերձավանի գյուղական համայնքում տեղակայված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը պատկանող զինավանին տրամադրել 34,76հա հողատարածք /ծածկագիր 503-0005/ անհատույց /մշտական/ օգտագործման իրավունքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը::

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2011թվական հուլիսի 29

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ

29 հուլիսի 2011թվականի թիվ 21

## ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով , Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքում 2011թվականի հուլիսի 29-ին կայացած աճուրդային կարգով հողի վաճառքի արդյունքները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքում 2011թվականի հուլիսի 29-ին կայացած 4,2519հա գյուղատնտեսական նշանակության այլ հողակտորի աճուրդային կարգով վաճառքի արդյունքները:

2.4,2519հա գյուղատնտեսական նշանակության այլ հողակտորի աճուրդային վաճառքի արդյունքում հաղթող ճանաչված «ՇԵՆ ԿՈՆՑԵՌՆ» ՓԲԸ-ն,ի դեմս գործադիր տնօրեն Պապ Սերոժի Բաղայանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր /լոտ 1, ծածկագիր 04-065-0609-0009/:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2011 թվականի հուլիսի 30
գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

29 հուլիսի 2011թվականի թիվ 22

ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով , Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքում 2011թվականի հուլիսի 29-ին կայացած աճուրդային կարգով հողի վաճառքի արդյունքները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքում 2011թվականի հուլիսի 29-ին կայացած 1,5679հա գյուղատնտեսական նշանակության այլ հողակտորի աճուրդային կարգով վաճառքի արդյունքները:

2.1,5679հա գյուղատնտեսական նշանակության այլ հողակտորի աճուրդային վաճառքի արդյունքում հաղթող ճանաչված Ռոբերտ Հուսիկի Ասլանյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր /լոտ 1, ծածկագիր 04-065-0609-0008/:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2011 թվականի հուլիսի 30

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

27 հուլիսի 2011թվականի թիվ 05

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով , Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 10 նիստի՝ «Համայնքի 2011 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 04-Ն որոշումը.

կարգադրում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 10 նիստի «Համայնքի 2011թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 04-Ն որոշմամբ հաստատված «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» գումարից 270,0 հազ./երկու հարյուր յոթանասուն հազար/ դրամ միանվագ դրամական պարգևատրում տրամադրել համայնքի ղեկավարի աշխատակազմի երեք աշխատակիցներին՝ աշխատանքային և ծառայողական պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար / համաձայն հավելվածի/:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2011 թվականի հուլիսի 28

գ. Մերձավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավանի
գյուղական համայնքի ղեկավարի
2011 թվականի հուլիսի 27-ի
թիվ 05 կարգադրության

| հ/հ | Ազգանուն, անուն | Պաշտոնի անվանումը և ծածկագիրը | Գումարի չափը/դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Գրիգորյան Լևոն | Համայնքի ղեկավար | 100000 |
| 2 | Եսայան Արևհատ | Համայնքի ղեկավարի տեղակալ | 80000 |
| 3 | Գևորգյան Հրանտուհի | Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 90000 |
| | Ընդամենը | | 270000 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

27 հուլիսի 2011թվականի թիվ 04

## ՎԵՄԻՐ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով և 159-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը,այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգը սահմանելու մասին» թիվ 1384-Ն որոշումը.

կարգադրում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ենթակայության «Կրթություն և մշակույթ» միացյալ տնօրինության տնօրեն Վեմիր Խուրշուդյանին 2011թվականի օգոստոսի 02-ից տրամադրել 2011թվականի ամենամյա հերթական արձակուրդը՝ 24 աշխատանքային օր տևողությամբ /20 աշխատանքային օր՝ նվազագույն,4 աշխատանքային օր՝ լրացուցիչ /:

2. Աշխատանքի մեջ համարել 2011թվականի սեպտեմբերի 02-ին:

3. Վեմիր Խուրշուդյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում նրա լիազորությունների իրականացումը վերապահել «Կրթություն և մշակույթ» միացյալ տնօրինության զեղմասվար Գոհար Սարգսյանին , չվճարելով աշխատավարձի տարբերությունը:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2011թվական հուլիսի 28

գ. Մերձավան